

Facilités
Incrovables

Prix
Imbattables

tapirama
THE LARGEST CARPET CENTER

**Credit sur 10 mois
sans intérêt et sans 1er versement**

Tapis: Persan - Chinois - Européen - Moquettes - Papiers peints.

Հ. Զ. Դ. ՀՐԲԱՍԱՍԻ
ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱՅ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՆԱԽԱՏՈՐՄ ՄԸ Կ'ԸՍԷ Ե. ԽՎԱՏԿՈՎ

Հայաստանի Ծովալին երթեւեկի Միութեան հա- խագահ եւզեցիի Խվատ- կով յայտարարեց, որ Հա- յաստան պետք է դուրս գալ շրջափակումէն, որ պայմանաւորուած է շրր- ջանի մէջ երթեւեկի հա- մակարգի զարգացու- մով:

Խվատկով ըսաւ, որ Հայաստանի արտածու- մներուն եւ ներածումնե- րուն մէծ մասը կը կա-

տարուին Սեւ ծովու վրա- յով, հետեւաբար անիկա տարտաւոր է ունեցալ հաւերեւ յարիսխներ Սեւ ծովու վրայ:

Խվատկով ըշեց, որ այս տարագային Հայաս- տանի աշխարհաքաղա- քական դերը աւելի կը շեշտուի, մահաւանդ որ անիկա Իրանի հետ գա- մաքային հաղորդակցու- թեան ուղիներ ունի: Այս- րուն մէծ մասը կը կա-

ւեկի հոր ցանցեր ստեղ- ձել:

Ներկայիս Ծովալին երթեւեկի Միութեան գործադիր տնօրէնը եւ ներկայացուցիչը Նովո- ռոսիսկիի մէջ բանակ- ցութիւններ կը վարեն հաւեր վարձելու եւ օգ- տագործելու համար: Այս իմաստով, հետաքրքրե- ւած է շուտակաւ «Հա- ւա» ընկերութիւնը: Բա- հակցութիւններ տեղի կ'ունենան հաւել լոյն եւ քանտացի հաւատերե- րու հետ:

Ներքուլած դրամագ- լուխներուն համար Ծո- վալին երթեւեկի Միու- թիւնը համաձայնագիր ստորագրած է «Պէյն Հոյ» առհանովագրական ընկերութեան հալիակաւ ներկայացուցչութեան հետ:

«ՀԱՐԿԱՅԻՆ ԼՐԱԲԵՐ»Ի ԱՌԱՋԻՆ ԹԻՒԸ

Մարտ 25ին յոյս տեսաւ Հայաստանի Հարկային տեսուչութեան պետական վարչութեան ուսումնա- կան կեդրոնի «Հարկային Լրաբեր» ամսագիրին ա- ռաջին համարը:

Ամսագիրին մէջ պիտի հրատարակուին հարկային քաղաքականութեան, հար- կային օրէնսդրութեան մէջ փոփոխութիւններու եւ յը- րացումներու, ինչպէս նա- եւայ հարցերու վերաբերե- ցալ թղթակցութիւններ:

Հարկային տեսչութեան պետին պէտքերը վարչութեան

պետի տեղակալ Արմէն Ա- յափերդեան յայտնեց, որ վերոյիշեալ ամսագիրը շա- րունակութիւնն է «Հայաս- տանի Հարկային Տեղեկա- գիր»ին, որ հրատարակ- ւած է 7 գիրքով:

Ան նշեց նաեւ, որ պար- րերականը հնարաւորու- թիւն պիտի տայ ծանօթա- նայու երկրին մէջ գործող հարկային համակարգին, ինչպէս նաեւ հաշուապահ- ներուն թիով պիտի տայ կա- նոնաւոր կերպով եւ ժա- մանակին տեղեկութիւն- ներ ստանալ հարկային օ- րէնսդրութեան մէջ կա- տարուող փոփոխութիւն- ներուն մասին:

ՄԱՅՔԸԼ ԱՌԼԵՆԻ ԳԻՐՔԸ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Այս տարուան Մայիս- սին, Հայաստանի մէջ յոյս պիտի տեսնէ Մայքրո Առ- լէնի «Ուղեւորութիւն Դեպի Արարատ» գիրքը: Համկիր Մայիս» հրատա- րակչութեան կողմէ:

Այս գիրքին մէջ կը յի- շատակուին մշակութա- կին ինքնութիւն ինտուե- յու խիստ անձնական յի- շողութիւններ, որոնք միաձուլուած են Հայ ժո- ղովուրդի հարուստ եւ ող- րերդական պատմութեան հետ:

Հեղինակը 1976ին շա- հած է ազգային գրական մրցանակ: Ան ընդունելով իր ծագումն եւ մշակու- թային արմատները՝ յաւ կը հասկնայ ծագումով հայ իր հօր հոգեմիճակը: Գիրքին կցուած է նաեւ Նե- րածական մը, որ գրած է Այոփայի համայնաբանի միջազգային գրողներու ծրագրի տնօրէն Քյարք Պեյան:

ՎԱՀԱԳՆ ՍՏԱՄՊՈԼՅԵԱՆԻ ԵՐԳԵՆՈՆԻ ԵՐՓՆՈՒՆԱԿ ՆՈՒԱԳԱՀԱՆՔԷՍԸ

«Լա Սեմֆոնի ֆանթազիք»ը յօրինող՝ տասնինե- րորդ դարու ֆրանսացի երաժիշտ Էքթոր Լուի Պերյոյի, արտայայտելով իր ճաշակը երաժշտական գործիքներու հանդէպ, կ'ըսէր. «Եթէ նուագախումբը կայսրն է, եր- գեհները՝ պապը»:

Արդարեւ, ժողովուրդներու պատմութեան մէջ ստեղ- ծագործուած եւ մասնագիտացուած երաժշտական գոր- ծիքներէն ամենաբարդը, ամենագարմանային եւ ամե- նաքանչելին եղած է երգեհները:

Քրիստոսէ առաջ երրորդ դարուն հնարուած այս գործիքը, իր սկզբնական շրջանին փոքրածաւալ ըլլա- լով, անոր գործածութիւնը, առհասարակ եղած է բա- ցօղեայ, կրկններու այլեւայլ խաղերու ընթացքին: Ան դարեր շարունակ կրած է մեծ փոփոխութիւններ ու յանգած՝ այժմու վիթխարի կազմին, որ իր ճարտարա- յեկանեան արուեստով մեծ յեմերու պնդագարդը կը հանդիսանայ ու նուագահանդիսներու՝ պանծանքով: Տարիներու ընթացքին, շօշափելով իր յատկութիւնները եւ մանաւանդ հնչական հարստութիւնը, ան մուտք գոր- ծեց եկեղեցիներէն եւ տաճարներէն ներս, հոգեւոր եր- գեցողութիւնը ձոխացնելու եւ մենակատարելու իրեն յատուկ յօրինուած գործեր:

Այսուամենայնիւ, իր շահեկանութեան համար ուղե- ցի արձանագրել, նախարարին մէջ, վերոյիշեալ տողե- րը, որոնք իոյս եկան մտքիս մէջ յետայն նուագահա- նդիսին, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, 8 Մարտ 1996ին, Ամերիկեան Համալսարանի «Էսեմպլի» Նոյն մէջ:

Վահագն Ստամպոլյեան՝ երգեհոնահար, փաստակա- ւոր երաժիշտ-արուեստագէտ Հայաստանի Հանրապե- տութեան, եկած էր Լիւրանան Համագայային Լիւրանանի Շրջանային Վարչութեան հրահանգով, նուագելու հայ հոգեւոր երաժշտութիւն եւ Եոհան Սեպասթիան Պախի յօրինումները: Երգեհոնի յոյս կարողութիւնները ի գործ դրուած էին: Անոր հնչիւն ձայները եւ հարուստ երիւնդարեց գոյները թափանցեցին մեր ականջները ու ուղեցեցին մեր յոյզական ջղուքը:

Երգեհոնը, ինքնին, մեքենայական գործիք մը ըլլա- լով, պիտի չկարենար իր գերազանց յատկութիւնները ի սպաս դնել ունկնդիրներուն, եթէ երգեհոնահարը չու- նենար յօրը տուեսները:

Իրաւ լսելու համար, աստուածաշնորհ, հոգեպարար եւ երկնաշաղջ հայ հոգեւոր երաժշտութիւնը, որ յարա- տել լսելով եւ մանաւանդ ապրելով գայն առօրեային մէջ, մեր կուլութեան կենսական գրաւականը եղած է աշոստ սակայն, Վահագն Ստամպոլյեանի մեկնաբանու- թեամբ, գունազեղ հանդերձով ներկայացաւ ան մեզի: Խորհրդաւոր մթնոլորտէն մինչեւ ամենափայլուն նիւնսաւաւորումը, աւելելով իմաստաւորեց, երաժշտու- կան գետնի վրայ, իւրաքանչիւր մեղեդի - «Խորհուրդ խորին անհաս անակիզել որ զարգարեցիք զվերին պե- տութիւնը ...» իր մեղծ, հանդարտ ու խորհրդաւոր տնայացով ուղեղունեցաւ մեծապաճաւ եւ թունդ երան- գաւորումի «Թագաւոր երկնաւոր գեկեղեցիլ քո ան- շարժ պանեա...» («Խորհուրդ Խորին»): Խաչատուր Տա-

րօնացի - 12րդ դար: Մշակուած Կոմիտասի): Միսթիք, եթերախաղաղ «Սուրբ Սուրբ»ի (Մաշալեան) երանք մերթ ընդ մերթ կ'ծաւալէր իմաստաւորելով «Սուրբ տեր զօրութեանց, լի եմ երկինք եւ երկիր փա- ռօք քո օրհնութիւն ի բարձունս...»: Իսկ Կոմիտասի «Սուրբ Սուրբ»ը գեփխաւաշունչ վեր յարձարացաւ, երա- նական կեանքին արժանացնելով Մեծն Կոմիտասը: Նոյնն էր պարագան Գրիգոր Նարեկացիի «Հաւուն, հաւուն»ը

ՂՈ - ԱՐԱՔՍ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱՅԻՆՈՒԹԻՆ ԶԱՅ ԼԵՁՈՒԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ԽՏԱՅԵԱԼ ԴԱՄԱՆԱՐԱՆ ԿԵՆԵՏԻԿԻ ԶԱՄԱՍԱՐԱՆ ՕԳՈՍՏՈՍ 1996

Վեներաբել համալսարանի հայ լեզուի եւ մշակոյթի խաղաղ պարսրացի, գործակալութեամբ Պա - Արաքս Ընկերակցութեան, տեղի պիտի ունենայ 1 - 23 Օգոստոս: Գեներալի ընկերը՝ 24 Օգոստոսին: ԺԱՄԱՆՈՒՄ՝ Յուլիս 30 եւ 31ին: Մեկնումը՝ Օգոստոս 25ին:

Դասընթացը ունի երկու կիմնական մակարդակ՝ բա- ցարձակ սկսնակներ, մինչեւ յիստալոյմներ, որոնց այս տարի, իրեն առաջին անգամ, կ'ուսելայ մեղմ առումով հալապիտութեան հոլորում յարաւ մը: Դասընթացի տեղի կ'ունենան երկու շարքի մէջ Ուրբ - օրը երկու պահ, առա- տեան: ԴԱՄԱՆՈՒՄ՝ ԵՐԵՎԱՆԻ ՄԻՒՆԻՎԵՐՍԻԹԵԹԻՄ՝ ՊԱՐԱՍՏԻՄ՝ Է:

Արձանագրութեան ստիք ոչ մէկ պարագայի կը փո- փոխուի եւ ԱՆԳԱՄ՝ ՄԸ ԿԱՍՏԱՆԻՄ՝ ՎԱՍՏԱՆԻՄ՝ ՈՐԵՆԻՄ՝ Է: Է՛լ ՊԱՏԱՆՈՒՄ՝ ԵՍ 2Ի ԴԱՐՁՈՒԹԻՄ՝ Դիմումները պիտի Է- կուտարել ԱՆՁԱՄ՝ ԵՒ ԳՐԱԽՈՐ՝ ԵՐԵՎԱՆԻՄ՝ ՄԵՇՏ 2ԵՐՈՒՄ՝ ԶԱՅՆԻ, երկ կայ՝ հաւել 2ԵՐՈՒՄՈՒՄՈՒՄ՝ (FAX) ԹԻՒ ՄԸ: ՊԱՅՄԱՆ Է յրապտեցած ըլլալ տատման տարեկան:

ԱՐՁԱՆԱԳՐԱԹԵԱՆ ՍԱԽԻՒՄ՝ 1.000.000 (մէկ միլիոն) խաղաղական լիքեա կամ տնօր համապատասխան տարա- յրամով՝ օրումն ստիկն համաձայն: այս գումարին 450.000 (չորս հարիւր յիսուն հազար) լիքեալ բաժնը պիտի Է ԿԱՆԻՍԻՄ՝ վերադա՛ն յետ առաջին ընդունելու- րեան գրաւոր պատասխանը՝ միւլեյի Ապրիլ 30: Յետ 30 Ապրիլի՝ կանխավճարը կը բարձրանայ 500.000 (երկու հարիւր հազար) լիքեալ: Արձանագրութեան մնացեալ մա- սը կը վերադա՛ն ՄԻՒՄԻՄ՝ ՈՐԸ: 10 ապրիլ 2ԵՂ2 մը կը կիրարկուի անոնց, որոնք հալապիտ լաւ արդիւնքով մաս- հակցած են զարգարացիին, առաւելագոյն երկու տարի առաջ:

Ամէն չԷԼ կամ փոխադր պիտի Է հաղեկագրուի ՄԻՍՅԻՒՄ՝ ԿԱՍԵՂ՝ ASSOCIAZIONE PADUS - ARAXES եւ դրիտի հետեւեալ հաղեկին՝ Assoc. Padus - Araxes - c/o Dipt. Studi Eurasiatici - S. Polo 2035 - 30125 Venezia (Italia): Կը լսելու իր ընթացի՝ երկեր՝ չիմել զրաժանային փո- խանցումի (bank transfer, virement bancaire), միւլեյնող - չԷԼ շատ բարձր անկիւնով պատկանով: Ամէն պարագայի՝ զրաժանային ԲՈՒՐՈՒՄ՝ ԵՐԵՎԱՆԻՄ՝ ԳԻՄՈՂԻՒՄ՝ ԿԸ ՊԱՍԿԱՆՆԻՒՄ՝:

Կրեմինուի ԲԵՂԻՄԻՒԹԵԱՆ հետաւորութիւն համալը - արալական ու սանդղատու մը ԲՈՒՄ՝ ՊԱՍԿԱՆՆԻՒՄ՝ վեկնե- ՏԻԼԻՒՄ՝ մէջ: 30 Յուլիս 24 Օգոստոս հետեւեալ, ամբողջ շրջանին համար, ԲԵՂԻՄԻՒԹԵԱՆ ՍԱԽԻՒՄ՝ Է՛լ 510.000 (երկու հարիւր տասը հազար) լիքեա երկու կամ երեք հաղեկաց:



(մշակուած Սերգէյ Աղաջանեանի), Աշոտ Պատրիկի «Զո- րըս ըստ տատկերի քում»ը (մշ. Գրիգոր Դանիկեանի), Ներսէս Շնորհալիի (12րդ դար) «Հրեշտակային կար- գաւորութեամբ»ը (մշ. Երուանդ Երկանեանի), Գրիգոր Պահլաւունիի (12րդ դար) «Ուլ Ջարմանալի»ն (մշ. Կո- միտասի): Իսկ աւարտելու համար յայտագիրին առա- ջին լաժիւնը, փառաւորութեամբ արձանագրեց Մակար Եկմայեանի հոգի վեհացնող «Ամէն, Հաւր Սուրբ»ը:

Վերոյիշեալ երանգաւորումի պատկերացումը եկաւ փաստելու Վահագն Ստամպոլյեանի երաժշտական մեծ կարողութիւնները եւ անխախտ կեդրոնացումը: Ան ծածկնդրողն էր հետեւէր ինչպիսի ցուցմունքներուն, փոխելով «Եթէ լսելով»ները, միախառնելով «խաղերը», ստանալու համար երաժշտական տարրեր գործիքներու հնչականութիւն - սրինդ, քլարինէթ, պուրտուն, մարդ - կային ձայն, ... որոնք պիտի կային ձոխացնելու երաժշ- տական կտորները, հեռանալու համար մենաձայնութե- նէն:

Բազմադարեան երգեհոնը, իր լազմահարիւր սուրիչ- ներով եւ փողերով, որքան որ խրթին է ան իր կազմով, նոյնքան այ սպառնիչ է իր կատարողական արուեստով: Այսպէս, Վ. Ստամպոլյեան ճարտարօրէն գործածեց ձեւերն ու ոտքերը, որոնք յորդորեցին գիրար եւ ող- ջալուրեցին երաժշտական իւրաքանչիւր նախադասու- թիւն եւ թեմա: Արդարեւ, Եոհան Սեպասթիան Պախի «Փրելլուտ եւ ֆիլլիք» (սիլ միլեթ) եկաւ հաստատելու կարողութիւնը եւ հասունութիւնը, գորս կը ցուցարե- ըէր Վահագն՝ իր մեկնաբանութեան մէջ:

Վահագնի կատարողական արուեստը մեծ ծաւալ ստացաւ Պախի «Քորալ»ի մէջ («Ուլ մարդ ողբա քու մեղքը մեծ») եւ մասնաւորապէս «Քորալ»ի տո մաժեթ- ր)», ուր յատկանշական եղաւ ոտքը տեղեկաշարի (փե- տալիէ) տղոյի լաժիւնը, որ կը պահանջէ իւրաքանչիւր թեքիլը, ունենալու համար ձկուն յողախաղ եւ ուղիղ հարուածներ:

Այս փաթեթով գործերը թնդապցուցին երգեհոնը բաժն- ձայներով եւ լազմիցս անգամ հրախրեցին Վահագնը բեմ լարձարանալու ծափահարութեան տարափին տակ:

Ան յաջողաբար նուագեց Պախի «Ատախի» եւ «Քորալ - Քրիստոսը մանուան զրկում», Կոմիտաս «Տեր Ողոր- միա» եւ Մ. Եկմայեանի յաւուր պատշաճ Սուրբ Ջատիկ- ւան շարական մը, որ ձօնը եղաւ այս հանդիսութեան ու հրաւիրեց մեզ հաղորդուելու Սուրբ Հոգւոյն հետ եւ ծառայելու Տիրոջ ուրախութեամբ:

ԳՈԿՏ. ՆՈՐԱ ՍԱԼՄԱՆԵԱՆ

ԳԱՂԹԻ ՀԱՐՅԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

Երեսանի Գիտություններու Ազգային Ակադեմիա- լին մէջ տեղի ունեցաւ գաղթի հարցերուն նուիրումա- կողմ սեղանը. «Գաղթը Հայաստանում» թեմայով:

Կողմ սեղանին մասնակիցները քննարկեցին գաղ- թի ծրագիրներու մշակումը, ինչպէս նաեւ՝ այս հարցին վերաբերեալ շահագրգիռ նախարարություններու մո- տեցումները, եւ այլն:

Բնկերային ապահովութեան նախարար Ռ. Բազդ- եան անհրաժեշտ համարեց գաղթականներու, ինչ- պէս նաեւ երկրէն մեկնող անձերու հարցերուն վերա- բերեալ ազգային քաղաքականութեան մշակումը: Ան ճշեց նաեւ գաղթի գործընթացները կարգաւորող օրէնսդրական հիմքի ստեղծման անհրաժեշտությունը եւ լայտնեց, թէ այս պատճառով հանրապետութեան մէջ պէտք է ստեղծել գաղթին հսկող միասնական մար- սին մը:

Գաղթականութեան վարչութեան նախկին պետ Վ. Լուկինեան յայտարարեց, որ Հայաստանի համար ընդունելի չեն գաղթի քաղաքականութեան հարցերու լուծման վրացական տարբերակի բազմաթիւ մեթո- ճիկները:

Ան լայտնեց, որ գաղթի ծրագիրը մշակել է առաջ, պէտք է սկսիլ տեղային ապահովանքէն եւ նկատի ունենալ Հայ ժողովուրդին առանցքայինները:

Ան ճշեց նաեւ, որ Հայաստանի մէջ ԼՐԱԿի գերա- ղոյն վերահսկիչի գաղթականներու հարցով ներկա- ցուցիչը եւ հանրապետութեան կառավարությունը պէտք է միասին միջոցներ որդեգրեն, որոնք գաղթա- կաններուն համար կարելիություն կը ստեղծեն ըլլալ Հայաստանի քաղաքացիներ եւ միաժամանակ օգտը- իր իրենց համար նախատեսուած արտօնություննե- րէն:

Հայաստանի մէջ ԼՐԱԿի գերազոյն վերահսկիչի գաղթականներու հարցերով ներկայացուցիչ Իոսիք Ռոպինյան, Անդրկովկասեան շրջանին մէջ գաղթա- կանութեան հարցերով միջազգային կազմակերպու- թեան ներկայացուցիչ Տեհիս Դալլ եւ Հայաստանի մէջ ԼՐԱԿի Ջարգացման Ընթացիկի ներկայացուցիչ Ժան Լարի Լորդէն յայտարարեցին, որ իրենք պատ- րաստ են աշակցելու շահագրգիռ նախարարություն- ներուն, գաղթի հարցերու գծով ծրագիրի մշակումին:

ԳՐԱՄԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի 33 դրամատուներու միջեւ նուորագոր- ւեցաւ համաձայնագիր մը, միջդրամատնային վճարում- ներու եւ փոխանցումներու կատարման պայմաններուն վերաբերեալ:

Հայաստանի Կեդրոնական Դրամատան տնօրէնի առաջին տեղակալ Արմէն Դարբինեան յայտնեց, որ այս- կա Հայաստանի մէջ առաջին փաստաթուղթն է, որ պիտի կանոնաւորէ միջդրամատնային փոխանցումնե- րը:

Նշենք, որ համաձայնագիրը ստորագրող դրամա- տուներու միջեւ վճերու լուծման համար կազմուեցաւ 7 անդամներէ լրագրացող միջդրամատնային իրաւա- րարներու խումբ մը:

Սի ծեր մարդ մօտեցաւ ինձ եւ հարցրեց. «Կարելի է մի րան ասեմ-գնամ»: «Խնդրեմ», ժպտացի եւ:

Հն ինչ լաւ օրեր էին... - տխուր ասաց նա եւ գնաց:

Ի՛նչ պէտք է անի ղեկավարը քաղաքական իր հակա- ռակորդներին ոչնչացնելու համար:

Պէտք է ինքն իր ղէմ մահափորձ կազմակերպի:

Այսինչ ղեկավարը բարձր մակարդակ ունի:

Այո, որովհետեւ չորած ես նայում...

Խորովածի սակարները մի՛ թափէք:

Ինչո՞ւ:

Մսի կոմբինատում վրաքաշի լաժիւն է լրացուել:

ՄԵՐԶԱԽՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԶՈՒՐԻ ՏԱԳՆԱՊԸ

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ԱՆԳՈՅՆ ՈՍԿԻՆ

1970ական թուականներում ընթացքին. քա-
րիւղը կը ներկայացներ Մերձաւոր Արեւելքի
քաղաքական եւ ռազմագիտական կարեւորա-
գոյն ղեկըր: Այսօր, ջուրը փոխարինած է քա-
րիւղի երբեմնի գերը:

Երջապատի պաշտպանութեան հարցերու ծի-
րէն ներս, ջուրի տագնապը մասնաւորապէս չէ
Մերձաւոր Արեւելքը: Ընդհակառակը, անկախ
վերածուած է միջազգային լուրջ մտահոգու-
թեան մը: Սակայն ստեղծուած կացութիւնը յու-
րաւարտակ է: Մերձաւոր Արեւելքը, տրուած ըլ-
լալով, որ աշխարհի ալ բնագաւառին մէջ, ջու-
րի տագնապը դուրս եկած է գիտական ուսում-
նասիրութիւններու շրջագծէն եւ վերածուած
բազմակողմանի քաղաքական, ընկերային եւ
տնտեսական հակամարտութեան մը, որ կը
սպառնա վերածուել գլոնալիզացիոնալ քաղաք-
անքանի:

Հագարաւոր տարիներ առաջ, Մերձաւոր
Արեւելքը կը հանգիստանար աշխարհի քաղա-
քական կեդրոնը, շնորհիւ Եփրատ ու
Տիգրիս գետերու հոսքի երկայնքին ստեղծուած
երկրագործական եւ հողամշակութեան տուեալ-
ներուն: Երջալը կը հանգիստանար Լաւաշի ար-
հիւանքի արհիւ գլխաւոր շտեմարաններէն մէ-
կը (միւս կեդրոնը ըլլալով Եգիպտոսը, շնորհիւ
իր Նեղոսին):

Սակայն դարերու ընթացքին, միատեսակ եւ
բազմաւոր արտադրութիւնները տկարացուցին
շրջանի հողը, աւելցնելով անոր մէջ աղի քա-
տակը: Կենսալոորտային ալ ազդակներ, ինչպէս
նաեւ շրջանին տիրապելու համար միջուած յա-
ջորդական քանդիչ պատերազմները երբեմնի
կանաչապատ արտերը վերածեցին անապատ-
ներու:

Ի տես այս կացութեան, շրջանի պետութիւն-
ները հսկայական արշաւի դիմած են իրենց
միլիոնաւոր բնակչի ներքին համար ապահովե-
լու անոնց վերապրումին եւ բարգաւաճման
հիմնական պայքարը ջուրը:

Տրուած ըլլալով, որ շրջանի անապատացու-
մով ջուրի աղբիւրները զգալիօրէն նուազած
են, վերալիշակ պետութիւնները հսկայական
սակարկութիւններու, շահաբաժնի, սպառնա-
լիքներու, ներթափանցողութեան եւ ալ մի-
ջոցներու դիմած են իրենց հովանաւորու-
թեամբ, հսկողութիւնը եւ կամ հսկակշիռը հաս-
տատելու համար գոյութիւն ունեցող սակաւա-
թիւ աղբիւրներուն վրայ:

Քարիւղի հարուստ ծոցի արաբական եր-
կիրները յաջողած են գտնել ժամանակաւոր լու-
ծում մը. անոնք քարիւղէն գոյացած եկամուտ-
ներէն հսկայական ներդրումներ կը կատարեն
եւ նույնքան հակադրական ուժանիւր կը վատնեն
ծովուն ջուրը գտնելու համար կայաններ կա-
ռուցելով եւ աղի կայանները բանեցնելով: Իս-

րայի նոյնպէս դիմած է ժամանակաւոր մի-
ջոցներու, իրեն ներթափ պահելով հարաւա-
րին Լիբանանի մէկ մասը, սուրիական Կոնանը
եւ Ալաբիորդանանը, օգտագործելու եւ դեպի
Նեկեւի անապատը մղելու՝ այս տարածաշրջ-
քաններու ջրային պայքարներու արտադրու-
թեան մէկ կարեւոր մասը:

Վերալիշակ զուգօրինակները կը նկատուին
ժամանակաւոր, որովհետեւ առաջին օրինակին
պարագային, քարիւղի եկամուտներու նուա-
զումը եւ օրընտօրէ անոյ ջուրի պահանջը այս
երկիրները պիտի մատնեն ջուրի մատակարար-
ման անբաւարարութեան: Արդէն իսկ ներկա-
յիս, ծովէն գտնուած տակաւ մը ըմպելի ջուրը
աւելի սուղ կ'արժէ քան տակաւ մը քարիւղը:
Միւս կողմէ, հարցական կը մնայ ալ իրողու-
թիւնը, թէ արդեօք Եփրատը որքա՞ն ժամանակ
տակաւին պիտի յաջողի իր հսկակշիռին տակ
պահել արաբական գրաւեալ հողերը:

Այս իրողութիւններէն անկախ, երկու եր-
կիրներ՝ Սուրիա եւ Իրաք իրենց ջուրի մատա-
կարարումը գրեթէ ամբողջութեամբ վստահած
են Եփրատ եւ Տիգրիս գետերուն, որոնց հոսքը
դեպի Սուրիա եւ Իրաք կ'ախաւ է... Թուրքիոյ
քմահաճութիւններէն, ինչպէս նաեւ Անգարայի
ոռոգման եւ ջրի եկարկանութեան արտադրու-
թեան ծրագիրներէն: Փակագծի մէջ լցնելը, որ
Տիգրիսը Իրաքի համար եւ Եփրատը՝ յաջորդա-
բար Սուրիոյ եւ Իրաքի միայն ոռոգման եւ ըմ-
պելի ջուր հաշիւաբեկ չեն ծառայեր: Նաեւ
անոնք կ'օգտագործուին ջրի եկարկանութեան
հարտարարութեան եւ բարգաւաճման ալ
ծրագիրներու նպատակներով:

Բնականաբար, Թուրքիա քաջատեղեակ է մէկ
կողմէ Նախիլի երկրին կողմէ իրեն շնորհուած
բնական այս հարստութիւններէն եւ միւս կող-
մէ՝ շրջանին ջուրի ստույգ պահանջներէն: Այս
լիմաստով է, որ Թուրքիա արդէն իսկ կը փորձէ
շրջանին վրայ հաստատել իր գերիշխանու-
թիւնը, ջուրը վերանշնչելով քաղաքական ղեկը:

Թուրքիոյ այս մօտեցումը նոր է: Արդէն
իսկ 1980ական թուականներու սկիզբը, Անգա-
րա առաջարկած էր իրագործել այսպէս կոչ-
ւած «Խաղաղութեան Խողովակ»ի ծրագիրը, որ
կը միտէր Թուրքիայէն դեպի արաբական եր-
կիրները եւ Իսրայէլ կառուցել ջրատար խողո-
վակներ. որոնք կը խոստանային անապատա-
յին շրջանները ողողել ջուրով: Փոխադարձա-
բար, Թուրքիա կ'առաջարկէր արաբական եր-
կիրներէն դեպի Թուրքիա կառուցել քարիւղա-
տար եւ կազատար խողովակներ: Թուրքիոյ վա-
րիչները կը պնդէին, որ այս ծրագիրին իրա-
գործումով, կարելի պիտի ըլլայ Միջին Արե-
ւելքի մէջ հաստատել ուժերու հաւասարակըշ-
ուութիւն եւ խաղաղութիւն (այսպէս ինչպէս Եւ-
րոպայի մէջ ուժերու հաւասարակշռութիւն եւ
խաղաղութիւն հաստատուած էր կորիզային
զենքերու սարսափին տակ):...

Բնականաբար, արաբական երկիրները մեր-
ժած էին այս ծրագիրը, տրուած ըլլալով, որ
անոր իրագործումով իրենց վիզը ամբողջու-
թեամբ պիտի երկարէին Թուրքիոյ եսթապ-
նին տակ:

ՓՈԹՈՐԻՎ՝
ՅԱՄԵՈՂ ԳԵՏԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Ներկայիս, հարցը վերստին սեղանի վրայ
դրուած է տարբեր նկատառումներով: Արդա-

րեւ, Թուրքիա անցեալ ամիս Եփրատի վրայ
սկսած գործադրութեան դէն «Կերեհիկի ամբար-
տակի կառուցումը, որուն շնորհիւ կարելի պի-
տի ըլլայ արտադրել 672 մեկաուաթ ելեկտրա-
կանութիւն: Այս ամբարտակը մաս կը կազմէ
Թուրքիոյ կողմէ այսպէս կոչուած հարաւ-արե-
ւելեան Անատոլիոյ Ծրագիրին (ԿԱՓ), որ կը
միտի շրջանին մէջ Եփրատի եւ Տիգրիսի վրայ
հաստատել որոշ թիւով ամբարտակներ, ոռոգ-
ման, ջրի եկարկանութեան եւ բարգաւաճման
նպատակով:

Կը նախատեսուի, որ ԿԱՓի ամբողջ ծրագի-
րի իրագործումը արժէ 30.3 միլիարտ տոնա-
լ (1981 թուականներու հիման վրայ, առանց նկա-
տի ունենալու սղանումի եւ տոկոսային հաշիւ-
ներ) եւ աւարտի 2006ին:

ԿԱՓի բաղկացուցիչ գլխաւոր տարրը՝ Աթա-
թուրք ամբարտակը 1992ին արդէն իսկ գոր-
ծադրութեան դրուեցաւ, նպատակ ունենալով
արտադրել 2400 մեկաուաթ ելեկտրականութիւն
(բաղկացուցիչներէն մը ընկնու նպատակով կ'արժէ
լիշատակել, որ միայն Աթաթուրք ամբարտակի
կողմէ արտադրուած ելեկտրականութիւնը հա-
մազօր է Կիլիկիոյ կարիքներու մօտաւորապէս
հաւաքածոյին):

1994ին, Թուրքիա գործադրութեան դրաւ
Ուրֆայի ոռոգման փապուղին (տունել), որ Եփ-
րատէն երկվայրկեանը 30 խորանարդ մէթր ջուր
կ'առաքէ դեպի Հարանի (Ուրֆայի հարաւ-արե-
ւելքը) անջրդի դաշտերը:


ԿԱՓի գործադրութեան իւրաքանչիւր
հանգրուանի, Սուրիա եւ Իրաք յանձնաւորե-
լողը կ'ալիքներ կը բարձրացնեն, իրաւացիօրէն
առարկելով, որ ծրագիրը օրընտօրէ կը նուա-
զեցնէ եւ կ'ապականէ դեպի Սուրիա եւ Իրաք
հասող ջուրը: Վերջերս, Տէր Ջօրի շրջանը աչ-
ցելողներ կրկան վկայել այս իրողութեան ի
նպատ: Արդարեւ, Եփրատի հոսքը բաւական
նուազած եւ նօսրացած է, երեւել հանելով եւ
ստեղծելով չորացած խոտեր եւ ճանկերէն բաղ-
կացած կղզիներ, ինչպէս նաեւ ընդարձակելով
անապատի սահմանները:

Երբ Թուրքիա գործադրութեան դրաւ «Կերե-
հիկի ամբարտակի շինարարութեան ծրագիրը, Սուրիա եւ Իրաք գտնուել հասած նկատեցին
ուսկորին: Հակառակ անոր, որ արաբական այս
երկու պետութիւնները ճանկացուած են իբրեւ
թշնամիներ, սակայն Թուրքիոյ այս աշխա-
տանքները պատճառ հանդիսացան, որ երկու
երկիրներէն ներկայացուցիչներ տեսակցու-
թիւններ ունեան, հարցը միակամ կերպով դնե-
լու համար արաբական եւ միջազգային հան-
րութեան առջեւ:

Թուրքիա - Սուրիա լարուածութիւնը հասած

է այն աստիճանի, որ երկու երկիրները իրենց
սահմանի երկայնքին ուժերը դրած են անա-
պատին վիճակի մէջ:

1987ին, Թուրքիա եւ Սուրիա ստորագրած
էին համաձայնագիր մը, որուն հիման վրայ
Թուրքիա կը խոստանար Եփրատի համբով Սու-
րիա ուղարկել երկվայրկեանը 500 խորանարդ



Աթաթուրք ամբարտակը կը պարպէ
Եփրատի ջուրերը:

մէթր ջուր: Սակայն վերջին շինարարութիւն-
ները պատճառ կը դառնան, որ Թուրքիա մերթ-
ընդմեք ընդհատէ ջուրի հոսքը, ամբարտակ-
ները լեցնելու պատրուակով: Տարօրինակօրէն
այս ընդհատումները կը զուգահիշուին քրտա-
կան հակաթուրք պայքարի աշխուժացման օրերուն:

ՀԱՌԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Յառաջիկայ ամիս տեղի պիտի ունենայ Արա-
բական Լիկայի տարեկան գերատնիսանը:

Սուրիոյ եւ Իրաքի դիւանագիտական աշխա-
տանքներուն շնորհիւ, ջուրի հարցին յատկաց-
ւած է առանձին օրակարգ: Կը սպասուի, որ
Արաբական Լիկան յստակ որոշումներ եւ բա-
նաձեւեր որդեգրէ այս ուղղութեամբ:

Մինչ այդ Սուրիա եւ Իրաք արդէն իսկ ան-
ցած են գործնական քայլերու, առաջին հերթին
ծրագրելով *պոլլուրի* երթարկել եւրոպական եւ
թրքական այն ընկերութիւնները, որոնք կը
մասնակցին ԿԱՓի զանազան աշխատանքնե-
րու իրագործման (այս ընկերութիւններուն
շարքին կը գտնուին հարտարարութեան հսկա-
ներ, ինչպէս օրինակ գերմանական Ֆիլիփ Չոյց-
ման, ֆրանսական - բրիտանական Ալքաթէլ Ալս-
թոմ եւ թրքական Կամա ընկերութիւնները):

Հաւանական է, որ Թուրքիա տեղի տալ մի-
ջազգային ճնշումներու դիմաց եթէ փոխադ-
նը կարենայ զիջումներ ապահովել Սուրիայէն
(անշուշտ Թուրքիա պիտի չզիջի եւ պիտի չըն-
րաժարի ԿԱՓէն, ալ պարագայէն պիտի ապա-
հովէ որ ծրագրի իրագործումը յարգէ 1987ի
պայմանագրութիւնը): Այս լիմաստով է, որ
Թուրքիա իբրեւ *շահաբաժնի* միջոց կ'օգտագործէ
ջուրերու հարցը: Գլխաւորաբար, Անգարա կը
պահանջէ, որ 'համախառն պարգեցնէ «անաբե-
կիչներու եւ խափանարաններու» հանդէպ տըր-
ւած զօրակցութիւնը...

Երբ հարց կը տրուի, թէ Թուրքիա ի՞նչ ըսե-
կ'ուզէ «անաբեկիչներ եւ խափանարաններ» ան-
ւանումով եւ թէ արդեօք այդ անւանումը կ'աղ-
ուած է միայն Քիւրտիստանի Աշխատաւորա-

կան Կուսակցութեան (ՓԷ. Քա. Քա.), անմի-
ջական պատասխան կը ստացուի եղրակցեցնե-
լով, որ Թուրքիա ըսել կ'ուզէ հակա - թուրք
բոլոր շարժումները, ինչ ազգի, ժողովուրդի
կամ կուսակցութեան որ ալ պատկանի անոնք...

ՀՐԱՅՐ ԳԵՐԳԵԱՆ

1992 թուականի աշ-
նան էր, Շուշիի պա-
տարումից մի քանի
ամիս անց: Երուանդ
Քոչարի տուն-թանգա-
րանի ցուցասրահում
բացուել էր արցախցի
նկարիչների ցուցահանդէս:

Առաջին անգամն էր, որ Երեւանում միա-
տեղ ցուցադրուում էին արցախցի հինգ գեղա-
նկարիչների ստեղծագործութիւններ: Անծա-
նօթ անուաններ էին: Մարդիկ հետաքրքրուած
մտնում էին, դիտում ցուցահանդէսը եւ խմոր-
ւում նրանցից մէկի կտուանների առջեւ՝ Մհեր
Փարիէյեանի: Նկարիչ, որ թէեւ երիտասարդ,
բայց միւսներից արդէն տարրերում էր իր
ուրույն ոճով ու ասելիքով:

Մհեր Փարիէյեան: Ծնունդ է 1964ին՝ Լեւո-
նային Ղարաբաղի Շուշի քաղաքում: Շուշին,
որ մի կատարեալ գլուխ գործոց էր իր ընու-
թեան գեղեցկութեամբ, ճարտարապետու-
թեամբ, համատեղ ապրող արեւելեան ժողո-
վուրդների տարրեր սովորութիւնների, ժողո-
վրդական ծէսերի ու մշակութիւններու համա-
ձուլումով, իր անսպառ հետաքրքրութիւն-
ների ոլորտում մեծացրեց ապագայ նկարչին:

Աշխարհում ապրող գեղեցիկն ու բարին ըն-
կայելու եւ այն իւրովի արտաբերելու շնորհ,
որ Աստուած է ծնէ պարզեւել էր նրան, իր
որոշակի, նախնական արտայայտութիւնը
ստացաւ հրաշքների այդ քաղաքում, գարպա-
ցաւ ու հարստացաւ ժողովրդական բառ ու
բանի, իմաստուն գրույցների եւ հնուց մնա-
ցած ազնուականութեան իւրայատուկ մթնո-
լորտում:

Մհերը սկսեց նկարել մանուկ հասակից,
նկարել ամէնուր, որտեղ պատահի՝ վաւարա-
նի վրայ, պատերին... նկարել այն, ինչ տես-
նում էր իրեն շրջապատող աշխարհում, նկա-
րել այն, ինչ կարծրացնում էր յօրինել իր ման-
կական երեւակայութեամբ: Եւ նոյն այդ ման-
կական երեւակայութեամբ կարծում էր, որ
նկարչութիւնը ոչ թէ մասնագիտութիւն է, այլ
միտք (հաճոյք), որ նոյնիսկ ամենամեծ նկա-
րիչները ունեն որեւէ այլ մասնագիտութիւն:

ԱՐՅԱԽՅԻ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ
ՄՀԵՐ ԳԱՐԻԷԼԵԱՆ

Եւ գուցէ կատարէր ըմբռնող ծնողների ցանկու-
թիւնը՝ հետեւէր նրանց մասնագիտութեանը,
եթէ մի օր չ'այտնարեւէր իր համար, որ նկար-
չութիւնը նոյնպէս կարող է մասնագիտութիւն
լինել:

Եւ ահա, 1981 թուին դպրոցն
աւարտելուց յետոյ ի գարման
ծնողների, յայտնուեց Երեւանի
մանկավարժական ինստիտուտի
նկարչական բաժնում: Ընդուն-
ւեց առանց հակառէ դժուարու-
թիւնների եւ մտաւ ուսանողա-
կան կեանքի մէջ:

Երեւանի ամբողջովին կյանք
նրան: Անյազօրէն հետաքրքր-
ւում էր այն ամէնով, ինչ տեսչը-
ւում էր նկարչութեանը. աչքե-
լում էր բոլոր ցուցահանդէսները, օրեր ու շա-
բաթներ էր անցկացնում Երեւանի Պետական
Պատկերասրահում, յաճախում էր դասական
համերգներ, օպերային եւ դրամատիկ թատ-
րոններ, այս ամէնով հարստացնում արուես-
տագէտի իր ներաշխարհը եւ ի հարկէ, նկա-
րում էր:

Ուսանողական տարիներին Մհերն աշակեր-
տել է նշանաւոր նկարիչներ Արտաշէս Յու-
նանեանի, Ռուբէն Դեւոյդեանի, Յովհաննէս
Զարդարեանի, իւրաքանչիւրից սովորել առա-
ւելագոյնը: Ուսանող ընկերների վկայու-
թեամբ Մհերն աշխատում էր ինքնամոռաց,
նրա համար չկային անձնական հաճոյքներ եւ
օրհնարանային ժամանցներ, այդ ամէնի փո-
խարէն գերադասում էր էստիլդեր կամ ճե-
պանկարներ անել: Միշտ մասնակցում էր ու-
սանողական ցուցահանդէսների եւ վերջին տա-
րին կազմակերպեց *անհատական ցուցահան-
դէս*: Արդէն ուսանող-նկարչի յաջողութիւնն
այնքան մեծ էր, որ ինստիտուտի տնօրէնու-



թիւնը նրան պարգեւատրեց Պուլկարիա գրօ-
սաղջիկական ճամբորդութեան ուղեգրով:

1988 թուին, աւարտելով ինստիտուտը, Մհե-
րը հրաժեշտ է տալիս Երեւանին, քաղաք, որ
իրեն տուել էր մասնագիտու-
թիւն եւ ընկերներ, ծանօթացրել
մեծ արուեստներին ու արուես-
տագէտներին հետ, քաղաք, որ նա
այնքան սիրում էր, եւ վերա-
դառնում է իր հարազատ ծննդ-
դավայր՝ Շուշի, ուր եւ մի
կարծ չղջան դասաւանդում է
նկարչութիւն:

1987 թուին մեկնում է խոր-
հորդային բանակ գինուորական
ծառայութեան: 88ի Փետրուա-
րին սկիզբը առած Ղարաբաղ-

եան շարժման մասին հնարաւոր չէր ճշգրիտ
տեղեկութիւններ ստանալ խորհրդային բա-
նակում, գինուորներից ամէն բան ծածկում
էին, իսկ հաղորդուած տեղեկութիւններն էլ
կցկտուր էին եւ մեծ մասամբ ենթափոխուած:

1989ին աւարտելով ծառայութիւնը, երիտա-
սարդ նկարիչը, կարօտած իր ազգականներին,
կարօտած իր հարազատ քաղաքին, կարօտած
իր մասնագիտութեանը, որ ով երկու տարի
գրադուելու հնարաւորութիւն չէր ունեցել, վե-
րադառնում է Արցախ եւ իր հարազատներին
գտնում Ստեփանակերտում, Շուշիից վտար-
ւած, իսկ իր երազների քաղաքը թշնամու ձեռ-
քում: Դաժան իրականութիւն եւ կործանուած
անուրջներ... Անմիջապէս փոխում են Մհերի
ընկալումները կեանքի երեւոյթների նկատ-
մամբ, մտայնում են նրա ներկայանալի գոյ-
ները, միջնում նկարները: Սակայն այդ մռայ-
լոյններով, իր սիրելի քաղաքի նկատմամբ ան-
օժհամ կարօտով եւ սրտում պահած մի թա-
քուն յաւատաստութեամբ ստեղծում է իր ստեղ-

դանքի կեանքի գուցէ առաջին հասուն
կտաները:

«Սպասում»՝ Շուշիի
Հագանչեցոյ եկեղեցու
գմբէթի, խորքում Ա-
րարատի լիչեցնող սա-

րեր: Իրականում՝ այդպիսի պատկեր չկայ
Շուշիից Արարատը չի երեւում: Սակայն պատ-
մութեան քառուղիներում դարերով տառա-
պած փոքրիկ Արցախի խորհրդանշող Հագան-
չեցոյ եկեղեցին Արարատի ֆոնի վրայ պատ-
կերելով նկարիչը պատկերացնում է Արցախի
եւ Մայր Հայաստանի միացումը:


Եւ այս ամէնը այնքան հարցաւորան, այնքան
յուսատրոյգ եւ յուսահատեցնող սպասումնե-
րով... Եւ իրեւ վաւերացում այս գաղափարի
կենտրոնում, աչքը հարազատի տուն



Մարզական



Մարզական



ԹԵՆԻՍ

ԼԻԲԱՆԱՆԻ ԹԵՆԻՍԻ ԽՈՒՄԲԸ ՅՐԴԴ ԴԱՍԱԿԱՐԳԷՆ ԲԱՐՁՐԱՅԱԻ ՉՐԴԻ

Շարափավերջին, վերջ դտան Տուպայի մէջ տեղի ունեցած թենիսի Տէյվիս ռաժակի Ասիոյ գօտիի մրցուցումները:

Բ. խմբակէն, Լիբանանի ազգային խումբը իր 6 մրցումներն այլ յաջողեցաւ չա՛իլ, անոնցմէ որոնցմէ 5ր՝ 3-0 արդիւնքով:

Ստորեւ արձանագրուած արդիւնքները.

ԼԻԲԱՆԱՆ - ՔԱԹԱՐ 3-0
Թաուֆիք Զահյան եւ Ալի Համատէ մասնակցեցան անհատական մրցումներուն, իսկ Համատէ - Զաքի Հասան գոյգր՝ գոյգի մրցումներուն:

ԼԻԲԱՆԱՆ - Ա. Մ. ԷՄԻՐԱԹԻԻՆԵՐ 3-0
Պատիհ Մուսնգէր եւ Ալի Համատէ մասնակցեցան անհատական մրցումներուն, իսկ Համատէ - Հասան՝ գոյգի:

ԼԻԲԱՆԱՆ - ՊՐՈՒՆԷՑ 3-0
Պատիհ Մուսնգէր եւ Թաուֆիք Զահյան՝ անհատական իսկ Համատէ - Հասան՝ գոյգի:

ԼԻԲԱՆԱՆ - ՊԱՆԵՄԱՆԻ 3-0
Զաքի Հասան եւ Ալի Համատէ՝ անհատական, Մուսնգէր - Զահյան՝ գոյգի:

ԼԻԲԱՆԱՆ - ՔՈՒԻԶԻԹ 3-0
Զաքի Հասան եւ Ալի Համատէ՝ անհատական, Հասան - Մուսնգէր՝ գոյգի:

ԼԻԲԱՆԱՆ - ՅՈՐԴԱՆԱՆ 2-1
Պատիհ Մուսնգէր եւ Ալի Համատէ անհատական, Մուսնգէր - Համատէ գոյգր պարտուեցան:

Այս մրցումներէն ետք, 2 խմբակներէն միայն Լիբանան կրցաւ իր 6 մրցումները չա՛իլ եւ բարձրանալ Բ. դասակարգ: Նշենք, թէ Ա. խմբակէն Սուրիա եւ Օման եւ Բ. խմբակէն Պրունէյ եւ Ա. Մ. Էմիրաթները փոխանցուեցան Դ. դասակարգ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԿԼԱՍԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐ

ԱՅՍՕՐ ՊԵԼՃԻԲԱ - ՖՐԱՆՍԱ, ԳԵՐՄԱՆԻԱ - ԴԱՆԻԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ - ՊՈՒԼԿԱՐԻԱ

Այսօր Եւրոպայի դաշտերուն վրայ, միջազգային բարեկամական Վ մրցումներ տեղի պիտի ունենան, մեծ մասը՝ Եւրոպայի ախոյեանութեան նախապատրաստութեան համար:

ՊՐԻԻԲՔՍԷԼԻ մէջ, Պելճիքա պիտի մրցի Ֆրանսային դէմ: Ֆրանսա պիտի փորձէ մրցանիշ մը հաստատել եւ իր 20րդ յաջորդական մրցումը առանց պարտութեան աւարտել:

Միշէլ Փլաթինիի մարզիչի օրերուն, Ֆրանսա յաջողած էր 19 մրցում անպարտելի մնալ: այսօր, էմիլ Ժաքէի հետ, անոնք նոյն արցանիշին հասած են եւ այժմ կ'ուզեն բարելաւել գալն:

Հաւանական է, որ յարձակող միջնապահներ՝ Եուրի Ճորքայէֆ (Փարիզ Ս. Ժ.) եւ Զինետին Զիտան (Պորտո) բացակային, վիրաւորուած ըլլալով:

ՄԻԻՆԻՆԻ մէջ, Գերմանիա պիտի հիւրընկալէ Դանիան, որ 1992ի, Եւրոպայի ախոյեանութեան աւարտականին (Շուէտի մէջ) 2-0 արդիւնքով անակնկալ յաղթանակ մը արձանագրած էր:

Գերմանիոյ կազմէն հաւանաբար բացակայի լիւսնի Սթիվան Զամբը (Տորթմունտ), որ սրունքի սուր ցաւէ կը տառապի: Նկատի ունենալով, որ վերքերուն Լոթար Մաթիս (Պայէրն Միւնխէն) նկատի չէ առնուած ազգային խումբին մէջ, կը սպասուի որ Պայէրնէն այլ մարզիկ մը թոմաս Զեմմըր խաղայ յիպերօ ղիւրքին վրայ:

Դանիոյ կազմին պիտի վերադառնան Հաուտուսի Երիկա Յոլմըրը՝ Միքայէլ եւ Պարլոն: Վերջինը կը վերադառնայ իր հին խումբին՝ Պայէրն Միւնխէնի դաշտը 4 տարի բացակայութենէ ետք:

Այլ հետաքրքրական մրցում մը կը խոստանայ ըլլալ «Ուեմսլի» մէջ տեղի ունենալիք Անգլիա - Պուլկարիա մրցումը:

Լիւրբիտիկ երկու մարզիկներ՝ վեթեան յետսպահան Մարք Ռայթ եւ Երիտասարդ Ռոպի Ֆաուրը նկատի առնուած են վեթեպրիկ կազմէն ներս, բայց ըստ Երեւոյթին միայն իրեւ պահեստի մարզիկներ, որովհետեւ կեղծուի յետսպահան գլխի վրայ պիտի խաղան Սթիւ Հաուս (Նիւքասթլ) եւ Կլայվ Սաուեթլի (Ասթոն Վիլա) մինչ յառաջագահ գոյգր պիտի ըլլան Թերի Զերինկս (Թոթեմհեմ) - Լէս Ֆերտինանտ (Նիւքասթլ):

Ստորեւ ախօրուած մրցումներուն յայտագիրը.

Անգլիա - Պուլկարիա ժամը 22.00ից

Գերմանիա - Դանիա ժամը 20.30ից

Հիւս. Իրլանտա - Նորվեգիա ժամը 21.30ից

Պելճիքա - Ֆրանսա ժամը 21.30ից

Ալբի - Ռուսիա ժամը 21.30ից

Փորթուգալ - Յունաստան ժամը 19.00ից

Աւստրիա - Զուիցերլանդ ժամը 21.30ից

Անգլիա - Աւստրալիա ժամը 22.00ից

Եւրոպայիա - Ռումանիա ժամը 20.00ից

ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՒՄԲԸ ԲԱՐՁՐԱՅԱԻ ՄՐՅՈՒՄՆԵՐ

ԱՅՍՕՐ՝ ԱՆՍԱՐ - Հ.Մ.Բ.Մ.

Այսօր, ժամը 14.45ին, Սայտայի Քաղաքապետարանի դաշտին վրայ, Հ.Մ.Բ.Մ. - Լիբանանի ֆուտբոլի ռաժակի մրցաշարքի քաղաքապետականին գծով պիտի մրցի Անսարի դէմ:

Հ.Մ.Բ.Մ. պիտի փորձէ ընել այն ինչ որ երկէրը Լաւաքէթ Շապալը Պրոժին, Երր մեծ անակնկալ մը ետք, Պրոժ 4-2 արդիւնքով պարտուեցաւ եւ դուրս մնաց մրցաշարքէն:

Հաւանական է, որ Վարդան եւ Արտակ վերադառնան իրենց պատժները աւարտելէ ետք, եւ փոխահար պիտի փորձեն մուցնել Դրոյի, Բաֆֆի ինչպէս նաեւ Լեոնի, Արմէնի կամ Յակոբ Կիւլիւմեանի բացակայութիւնները:

Պրոժին դէմ, Շարափ օր, իւրաքանչիւր մարզիկ իր դիրքին վրայ իր պարտականութիւնը լաւապէս կատարեց, եւ յարատեւ փրկեց իր անխնայ խաղը:

Այսօր, անփորձ մարզիկ փորձառուին հետ պիտի փորձէ անպայման յաղթանակ ան հոգի ցալ, նոյնիսկ եթէ այդ յաղթանակը ըլլալ «բարտի հարուածներով» փնտրուի: Ուստի փրկաւորուած Բաֆֆի կը յուսայ չուտով դաշտ վերադառնալ:

Ինչ ալ ըլլան պայմանները՝ ցեղատ դաշտ կամ անձրեւոտ երկինք, տղաքը նոյն կամքով դաշտ պիտի

ներկայանան, փաստելու համար թէ 90 կամ 120 վայրկեաններուն, խումբերուն անունները չեն որ ֆուտբոլ կը խաղան, այլ 22 մարզիկներ որոնցմէ աւելի լաւ պատրաստուողը կամ պայքարի ոգի ունեցողն է որ կը գերազանցէ միւսը:

Պրոժ Համուտի Քաղաքապետարանի դէմ, այլ հետաքրքրական մրցում մը պիտի տեսնենք:

Միջազգային խախնի միջազգային յառաջագահ Սայտաթորէ (Թուրքի) Սթիվան Զամբըրի խախնի կույր, Ժուլիո Խաւթի հետ, կամպա Օգաթայի դէմ մրցումին: Դրոյ վայրկեանին, Սապալի Նաքայամ նշանակած էր Խաւթի առաջին կույր: Հինգ վայրկեան ետք, Սթիվան նշանակեց երկուրդը եւ վերջին կույր:

Խաւթի կողմին, անպարտելի կազմը են Քալիմ Անթոյր, Նախա Կրամիտ Էյթ, Ուրաուա Ռիստ Եւրոհամ Ֆուլկը:

Շուրհիւ Եւրոհեմի Հասեկաուայի երկու կողմուն, Քալիմ յաղթեց Քիլիմ Փորիթ Սանկայի եւ վերջոյ 5-1 արդիւնքով յաղթական դուրս եկաւ:

Այսօր Եւրոհամ Մարիտոս իր երրորդ պարտութիւնը կրցաւ Ուրաուայէն, 2-0 արդիւնքով:

1993ի, եւ 1994ի ախոյեան Վերտի Քաուապալի յետ երկարաձգման պարտուեցաւ Քալիմ Ռիստի (3-2): Միջնապահ Եուրի Եւրոհամ նշանակեց յաղթանակի կույր:

ՈՒԷԱՅԻ ԶԱՐՄԻԿԸ ԿԸ ՀԵՏԱՔՐՔՐԷ ՊՐՈՆՏՊԻՆ

Լիպերիայի աստղ ժորժ Ուէլայի գարմիկը՝ Միլա Պիմմա-տի Մրհմէտ գրաւած է հետաքրքրուած Դանիոյ Պրոնտպիլին ուղարկութիւնը:

Դանիոյ կազմի պիտի մէջ մտած է Ուէլայի հետ. յաւելեալ տեղեկութիւններ ունենալու համար այս անձանթ մարզիկին մասին:

Միլա յառաջիկայ օրերուն կրնայ Դանիա աչքերը եւ տեսակցութիւն ունենալ Պրոնտպիլի պատասխանատուներուն հետ:

ՖԵՐԻՆԱՆՏ ՍՏԱՅԱԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՄԱՐԶԻԿԻ ՏԻՏՂՈՍԸ

Նիւֆէրը Եւրոպայի յառաջագահ Լէս Ֆերտինանտ ընտրուեցաւ տարուած լաւագոյն ֆուտբոլիստը: Ան այս առիթով յառուէ յուշանուէր մը ստացաւ իր թրիքի մը ընթացքին, որ կազմակերպուած էր ի պատիւ իրեն:

36 մրցումներու ընթացքին 26 կույ նշանակած, Ֆերտինանտ նկատուած էր լաւագոյն մարզիկը, գերազանցելով անցեալ տարուան տիտղոսակիր Էլրի Զիլորը (Պելքարը Ռոմիոյ) եւ իր խմբակից տարակաւոր՝ Ֆրանսայի Տալիտ Ժիւրիան (Նիւքասթլ):

Ֆերտինանտ յուշանուէրը յանձնեցին պրագիլիացի Փեյլ եւ Անգլիոյ ազգային խումբին նախկին բերդապահ Կորտի Պիլքս:

Հ.Մ.Բ.Մ. ԼԵՎԱՍ

ՊԱՍԲԵԹՊՈԼԻ ԵՒ ՖՈՒԹՊՈԼԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ ԱՅՍ ՇԱԲԱԹԱՎԵՐՁԻՆ

Հ.Մ.Բ.Մ. ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ԼԵՎԱՍ յանձնախումբի կազմակերպած պասքեթբոլի եւ ֆուտբոլի մրցումները պիտի շարունակուին այս շաբաթավերջին:

Անձրեւելու պարագային, Շարափ օրուած մրցումները պիտի կատարուին Կիրակի օր՝ էօ Էն-Պէլի դաշտին վրայ:

Ստորեւ Շարափ օրուած յայտագիրը. (Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Քոյէճի դաշտին վրայ):

Ժամը 12.30ին, միջակ տղաք. - Ս. Խանամիրեան - Շամբեան Թաթիկեան

Ժամը 13.30ին, միջակ աղջիկներ. - Շամբեան Թաթիկեան - Եղիշ Մանուկեան

Ժամը 14.30ին փոքր տղաք. - Ճեմարան - Մեսրոպեան

Ժամը 15.15ին, միջակ աղջիկներ. - Յաւաթ (Այնճար) - Լ. եւ Ս. Յակոբեան

Ժամը 16.15ին, միջակ աղջիկներ. - Հոսիսիմեանց - Քաղաքի Հայ Աւետ. Քոյէճ

Ժամը 17.15ին, մեծ տղաք. - Լ. եւ Ս. Յակոբեան - Յաւաթ (Այնճար)

Ֆուտբոլի մրցումները տեղի պիտի ունենան Շարափ օր հետեւեալ յայտագիրով.

Ժամը 14.30ին, փոքր տղաք. - Յաւաթ (Այնճար) - Շամբեան Թաթիկեան

Ժամը 15.45ին, մեծ տղաք. - Մեսրոպեան - Արհեստից Ստորեւ Կիրակի օրուած պասքեթբոլի մրցումները Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Քոյէճի դաշտին վրայ.

Ժամը 14.00ին, մեծ տղաք. - Հայ Աւետ. Քոյէճ - Ե. Մանուկեան

Ժամը 15.15ին մեծ տղաք. - Ճեմարան - Ս. Խանամիրեան

Ժամը 16.30ին, մեծ տղաք. - Շամբեան Թաթիկեան - Հոսիսիմեանց:

ՎԱՐՁՈՒ Ե ՈՍԿԵՐԻՉԻ ԳՈՐԾԱՏԵՂԻ (ԽԼՈՒՅՈՎ)

● Պորժ Համուտի մէջ, Սանթր Կրա. Բ. յարկ: Հնո. 328783:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ

● Պորժ Համուտ, Արաքս թաղի մայր ճամբայ, Ա. յարկ: 2 սենեակ: Հնո. 260563:

ԹԵՆԻՍ

ԱՂԱՍԻ ԵՒ ԿՐԱՖ ՅԱՂԹԱԿԱՆ

Երկէ շարունակուեցաւ Քիլիպէյնի (Ֆրոնտա, Մ. Ն.) մէջ տեղի ունեցած «Լիպի-րի» մրցաշարքը, որ տեղի ունեցան Գ. հանգրուանի մրցումները:

Տղոց մրցումներուն, ամէն գնով թիւ 1 դիրքին վերադառնալու համար պայքարող Անտրի Ադասի, 6-2, 4-6 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնեց Ֆրանսայի Ժան Ֆրիլի Ֆրոնտա եւ հասաւ Դ. հանգրուանին:

Աղջկանց մրցումներուն, թիւ 1 դասուած Շեթֆի կրաֆ դիրքին յաղթանակ մը արձանագրեց ամերիկացի Մարի Ճո Ֆերտինանտին վրայ, 6-1 եւ 6-0 արդիւնքով:

Ստորեւ արձանագրուած մրցումներուն թեքնիք արդիւնքները.

ՏՂԱՔ
Անտրի Ադասի (Մ. Ն.) - Ժան Ֆրիլի (Ֆրանսա) 6-2, 4-6 եւ 6-2

Մարք Ռոսէթ (Զուիցերիա) - Թոտ Վուտպրիմ (Աւստրալիա) 7-5, 5-7 եւ 7-6

Շեթֆան Էտպլի (Շուէտ) - Նիլ

Ֆրիլի (Ֆրանսա) - Մարի Ճո Ֆերտինանտ (Մ. Ն.) 6-3 եւ 6-4

Աղջիկներ
Շեթֆի կրաֆ (Գերմանիա) - Մարի Ճո Ֆերտինանտ (Մ. Ն.) 6-1 եւ 6-0

Անթրի Զիլոր (Գերմանիա) - Ճիւտիթ Վիլքոր (Աւստրիա) 6-4 եւ 6-4

Կարիերայի Սապաթիլի (Արժանթին) - Ճեյնիքոր Քափրիաթի (Մ. Ն.) 6-1 եւ 6-4

Քիմիք Տաթի (Ճապոն) - Միլիվա Ֆարինա (Իտալիա) 6-2 եւ 6-2

Զանտա Ռուպին (Մ. Ն.) - Նաքայի Թոգիա (Ֆրանսա) 6-3 եւ 6-4

Լիւտի Տէյվիսի փորձ (Մ. Ն.) - Ան Կրոման (Մ. Ն.) 6-0 եւ 6-2

Իրինա Սիլերի (Ռուսիա) - Այ Սուկիամա (Ճապոն) 6-4 եւ 7-5

Աղալի

Քոյա Գերիլա (Վենեսուելա) 6-4 եւ 6-2

Մայքլ Թեպրի (Աւստրալիա) - Հենտիք Տրիքման (Գերմանիա) 6-2 եւ 6-3

Ճիմ Քուրի (Մ. Ն.) - Պարլոն Պիլք (Զիմպապուելա) 7-6 եւ 6-0

Աղալի

Քոյա Գերիլա (Վենեսուելա) 6-4 եւ 6-2

Մայքլ Թեպրի (Աւստրալիա) - Հենտիք Տրիքման (Գերմանիա) 6-2 եւ 6-3

Ճիմ Քուրի (Մ. Ն.) - Պարլոն Պիլք (Զիմպապուելա) 7-6 եւ 6-0

Աղալի

Քոյա Գերիլա (Վենեսուելա) 6-4 եւ 6-2

Մայքլ Թեպրի (Աւստրալիա) - Հենտիք Տրիքման (Գերմանիա) 6-2 եւ 6-3

Ճիմ Քուրի (Մ. Ն.) - Պարլոն Պիլք (Զիմպապուելա) 7-6 եւ 6-0

Աղալի

Քոյա Գերիլա (Վենեսուելա) 6-4 եւ 6-2

Մայքլ Թեպրի (Աւստրալիա) - Հենտիք Տրիքման (Գերմանիա) 6-2 եւ 6-3

Ճիմ Քուրի (Մ. Ն.) - Պարլոն Պիլք (Զիմպապուելա) 7-6 եւ 6-0

Աղալի

Քոյա Գերիլա (Վենեսուելա) 6-4 եւ 6-2

Մայքլ Թեպրի (Աւստրալիա) - Հենտիք Տրիքման (Գերմանիա) 6-2 եւ 6-3

Ճիմ Քուրի (Մ. Ն.) - Պարլոն Պիլք (Զիմպապուելա) 7-6 եւ 6-0

Աղալի

Քոյա Գերիլա (Վենեսուելա) 6-4 եւ 6-2

Մայքլ Թեպրի (Աւստրալիա) - Հենտիք Տրիքման (Գերմանիա) 6-2 եւ 6-3

Ճիմ Քուրի (Մ. Ն.) - Պարլոն Պիլք (Զիմպապուելա) 7-6 եւ 6-0

أزيتاك